

## ՄԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ

1. Հայոց նոր վկաները (1155—1843) աշխ. Հ. Մանան-  
դեանի և Հ. Աճառեանի. 1903 Վաղարշապատ:

Այս օրերս լոյս տեսաւ ո. Էջմիածնի տպարանից մի գիրք,  
որի բովանդակութիւնն է Հայոց նոր վկաների, այսինքն կրօնի  
համար նահատակուած հայ մարդկանց մասին կենսագրական  
աեղեկութիւնները. գիրքը կատարուած է բազմաթիւ ձեռագրե-  
րի համեմատութեամբ և ճոխացրած հրատարակիչների ծանօ-  
թութիւններով:

Խնդրին վերաբերեալ գրականութեան ի մօտոյ ծանօթ  
չլինելուն պատճառով՝ մենք անձեռնհաս ենք ի հարկէ դատե-  
լու թէ որբան լիակատար են այս կենսագրական տեղեկու-  
թիւնները, որ վերաբերում են 1155 թուից մինչև 1843 թիւը  
և թէ կա՞ն արդեօք գրականութեան և ձեռագիրների մէջ ու-  
րիշ կենսագրութիւններ և տեղեկութիւններ, որոնք չեն մտել  
այս գրքի մէջ։ Սակայն ձեռքի տակ ունեցած 800 երեսից բաղ-  
կացած մեծ հատորը ինքն ըստ ինքեան ուշադրութեան արժա-  
նի մեծ գործ է, և ամեն մի հայի համար այնպիսի մի նուիրա-  
կան գիրք, որ միշտ պէտք է ունենալ ձեռքի տակ։

Այս գրքի մէջ զետեղած 113 նահատակների կենսագրու-  
թիւնները միանդամայն կենդանի կերպով պատկերացնում են  
ընթերցողի առաջ ոչ միայն վերջին եօթ դարու մեր պատմու-  
թեան հետաքրքրական մասը, այլ և հայի գյոււթեան իսկական  
գաղտնիքը, որ միշտ անհասկանալի է եղել նորան տիրապետող  
յահմեդական և ոչ մահմեդական պետութիւններին։

Թէպէտև մեր եկեղեցին ունեցել է նոյնպէս բազմաթիւ  
նահատակներ և սրբեր, բայց ինչպէս յայտնի է, զերծ է մա-  
զել մոլեռանդութիւնից և առհասարակ պաշտօնապէս շատ քիչ  
սուրբեր է ընդունել և տօնուող սրբերի մեծագոյն մասը քրիս-

տոնէական եկեղեցու առաջին երեք դարու նահատակներ են, որոնք տօնում են բոլոր քրիստոնեայ եկեղեցիներից:

Յայտնի է, որ մեր եկեղեցին համարեա թէ եօթերորդ դարից յետոյ այլ ևս չէ սրբագրծել որև է նահատակի յիշատակը, եթէ չհաշուենք երջ. Սիմեօն կաթուղիկոսի կարգադրութեամբ ընդունուած՝ Հայ եկեղեցու քաջ ախոյեաններ՝ Թովիչան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու սրբացումը:

Մեր ձեռքի տակ եղած հրատարակութիւնը վերաբերում է 12-դ դարից յետոյ եղած ժամանակամիջոցին, մինչդեռ յայտնի է, որ մեր եկեղեցին ունեցել է և միշտ ունի անթիւ նահատակներ, որոնց կեանքի վերաբերեալ տեղեկութիւնները ի հարկէ՝ նոյնպէս վերին աստիճանի հետաքրքրական են. պէտք է յուսալ, որ կամ այս գրքի հրատարակիչները և կամ ուրիշները հձեռնարկեն ի մի ժողովել նաև մինչև 12-րդ դար եղած նահատակների կենսագրութեան վերաբերեալ նիւթերը:

Յիշեալ գիրքը, բազի այն՝ որ ընթերցանութեան հաճելի և պատմական տեղեկութիւններով հետաքրքրական մի նիւթէ, ծանօթացնում է նաև Հայ ժողովրդի հոգու այն արիութեան և վեհութեան հետ, որով այնքան զօրեղ է եղել Հայ եկեղեցնին: Բազի այս ամենը, գիրքը հետաքրքրական է նաև իրըն նիւթ թէ եկեղեցու, թէ արտաքին քաղաքական պատմութեան և թէ երկրին վերաբերեալ տեղեկութիւններով և նոյնպէս յեղուի ուսումնասիրութեան տեսակէտից. այս պատճառով արժանի է խրախուսանքի:

## 2. Հրաշալի դար, պրօֆ. Ռ. Ա. ԸՆԼԱԿԵՍԻ. թարգմ. Ստ: Լիսիցեան. 1904, Թիֆլիս:

Անգլիացի նշանաւոր բնագէտի վերսիշեալ գիրքը մի համառօտ զեկուցումն է անգեալ տասնիններորդ դարու գիտնական նիւթերի և առհատարակ քաղաքակրթութեան մասին: Յայտնի է, որ անցեալ դարը զարմանալի գիւտերով հարուստ է և ինչ որ մարդկութիւնը չէր տեսել իւր գոյութեան ամբողջ շրջանում՝ տեսաւ հարիւր տարուայ ընթացքում: Բնութեան ուժերը, որ առաջ սարսափեցնում էին մարդուն և աչ ու երկեւդ աղդում նրան՝ այս դարում իրանք խոնարհեցին մարդկային խելքի և կամքի առաջ և նրա բարօրութեան նպաստամատոյց